Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
նախագահի 2015 թվականի նոյեմբերի 11-ի
թիվ ՆՈ-046-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՈՒՇԱՆՎԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (այսուհետ՝ Ազգային ժողով) նախագահի շնորհակալագրով (այսուհետ՝ Շնորհակալագիր), Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշամեդալով (այսուհետ՝ Հուշամեդալ) և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշանվերով (այսուհետ՝ Հուշանվեր) պարգևատրման կարգը:

2. Շնորհակալագրով, Հուշամեդալով և Հուշանվերով պարգևատրում է Ազգային ժողովի նախագահը:

3. Շնորհակալագրով և Հուշանվերով պարգևատրվում են Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողները, Ազգային ժողովում հայեցողական պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք՝ աշխատանքային պարտականությունները կամ հատուկ առաջադրանքները որակյալ և նվիրումով կատարելու համար, ինչպես նաև իրավաբանական կամ ֆիզիկական անձինք՝ տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի, արվեստի, առողջապահության, սպորտի զարգացման և այլ ոլորտներում մատուցած ծառայությունների համար:

4. Շնորհակալագիր և Հուշանվեր շնորհվում է Ազգային ժողովի նախագահի կարգադրության հիման վրա՝ սեփական նախաձեռնությամբ կամ Ազգային ժողովի նախագահի տեղակալի, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի կամ Աշխատակազմի ղեկավարի միջնորդությամբ, որը ներկայացվում է Ազգային ժողովի նախագահին:

5. Շնորհակալագրով և Հուշանվերով պարգևատրման միջնորդությանը կից Ազգային ժողովի նախագահին են ներկայացվում պարգևատրվող անձի վերաբերյալ կենսագրական տվյալները, անձնական բնութագիրը և պարգևատրման հիմքը:

6. Հուշամեդալը Ազգային ժողովի նախագահի բարձրագույն պարգևն է, որը տրվում է սփյուռքի հետ կապերի ամրապնդման, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, հայրենիքի պաշտպանության գործում ներդրած զգալի ավանդի, բարեգործական ակտիվ գործունեության, ինչպես նաև տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի, արվեստի, առողջապահության, սպորտի զարգացման և այլ ոլորտներում ներդրած ավանդի և նշանակալի ձեռքբերումների համար:

7. Հուշամեդալով կարող են պարգևատրվել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիները:

8. Հուշամեդալով պարգևատրում իրականացվում է Ազգային ժողովի նախագահի կարգադրության հիման վրա՝ սեփական նախաձեռնությամբ կամ Ազգային ժողովի նախագահի տեղակալի, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի կամ Աշխատակազմի ղեկավարի միջնորդությամբ, որը ներկայացվում է Ազգային ժողովի նախագահին:

9. Պարգևատրման միջնորդությանը կից Ազգային ժողովի նախագահին են ներկայացվում պարգևատրվող անձի վերաբերյալ կենսագրական տվյալներ, անձնական բնութագիրը և պարգևատրման հիմքը:

10. Հուշամեդալով կրկնակի պարգևատրում չի իրականացվում:

11. Պարգևատրման մասին միջնորդությունը հիմնավոր համարելով՝ Ազգային ժողովի նախագահը, միջնորդությունը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, այն, կից փաստաթղթերի հետ միասին, ուղարկում է Ազգային ժողովի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն (այսուհետ՝ Անձնակազմի կառավարման վարչություն)՝ հանձնարարելով պատրաստել Ազգային ժողովի նախագահի կարգադրության նախագիծ: Նշված ժամկետում համապատասխան հանձնարարական չուղարկելը համարվում է միջնորդության մերժում:

12. Պարգևատրման գործընթացի կազմակերպման համար պատասխանատու է Ազգային ժողովի աշխատակազմի արարողակարգի վարչությունը:

13. Շնորհակալագիրը, Հուշամեդալը և Հուշանվերը հանձնում է Ազգային ժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ համապատասխան պաշտոնատար անձը՝ հանդիսավոր պայմաններում:

14. Պարգևատրված անձանց կողմից Ազգային ժողովի նախագահի Հուշամեդալը և(կամ) դրա վկայագիրը կամ Շնորհակալագիրը կորցնելու դեպքում դրանց նկատմամբ իրավունքները պահպանում են:

15. Հուշամեդալի կորստի կամ վնասման դեպքում կրկնօրինակ չի տրվում, բացառությամբ, եթե այն կորել կամ վնասվել է մարտական պայմաններում, արտակարգ իրավիճակների հետևանքով կամ այլ հանգամանքներում, երբ մեդալը պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու հնարավորություն չի եղել:

16. Հուշամեդալի և (կամ) դրա վկայագրի կամ Շնորհակալագրի կորստի կամ վնասման դեպքում դրանց կրկնօրինակները ստանալու համար գրավոր դիմում է ներկայացվում Ազգային ժողովի աշխատակազմ: Հուշամեդալի կորստի կամ վնասման դեպքում կրկնօրինակն ստանալու դիմումին կցվում են նաև ապացույցներ առ այն, որ այն կորել կամ վնասվել է մարտական պայմաններում, արտակարգ իրավիճակների հետևանքով կամ այլ հանգամանքներում, երբ մեդալը պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու հնարավորություն չի եղել:

17. Ազգային ժողովի նախագահի Հուշամեդալի և (կամ) դրա վկայագրի կամ Շնորհակալագրի կրկնօրինակը տրվում է համապատասխան դիմումը ներկայացվելուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

18. Կորցրած Հուշամեդալի և (կամ) դրա վկայագրի կամ Շնորհակալագրի կրկնօրինակը պարգևատրված անձանց հանձնում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը:

19. Շնորհակալագրով և Հուշամեդալով պարգևատրված անձանց գրանցումն ու հաշվառումն իրականացնում է Անձնակազմի կառավարման վարչությունը, որն այդ նպատակով վարում է հատուկ գրանցամատյան:

20. Գրանցամատյանում նշվում են պարգևատրված անձի անուն-ազգանունը, պարգևատրման հիմքը, համապատասխան կարգադրության ընդունման ամսաթիվը և հերթական համարը, Հուշամեդալի հերթական համարը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար- գլխավոր քարտուղար **Հրայր Թովմասյան**